



ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հ Ր Ա Մ Ա Ն

23 *Տարբեր* 2011 թ

N 668 -Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
N16-Ն ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՈՐՈՇ ՁԵՎԵՐ ՄԻԱՅՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետը և հարկային տեսչությունների ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների միջև միևնույն տեղեկատվության կրկնակի փոխանցումները կրճատելու նպատակով՝


ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր առընթեր հարկային պետական ծառայության 2007 թվականի դեկտեմբերի 17-ի «Հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների հաշվանցման և (կամ) վերադարձման համար նախատեսված եզրակացությունների և ամփոփ տեղեկանքների ձևերը հաստատելու մասին» N 16-Ն հրամանով սահմանված՝ «Ձև 1», «Ձև 2» և «Ձև 2.1» եզրակացությունները և «Ձև 4» ամփոփ տեղեկանքը հարկային տեսչությունները

վերադաս հարկային մարմին ներկայացվում են միայն էլեկտրոնային եղանակով՝ բացառելով այդ ձևերի թղթային տարբերակով տրամադրումը վերադաս հարկային մարմին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կոմիտեի նախագահ՝



Գ. Խաչատրյան